

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1954 ՄԱՐՏ - ԱՊՐԵԼ Թ. 3 - 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	Էջ
ՃԱՆԱՇՆԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Ապրիլեան ձայնը	49
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԳԱՆ. — Նորակերտ հայ Լուսինեաններ (շարք)	53
ՖՈԿԼՈՐԱՆ Հ. ԱՆԳՐԵԱՍ. — Ապերի Կոմսի զարմանալի կեանքը (շարք)	58
ՄԻՍԱԲԵԱՆ ԲԺ. Պ. — Լուի Փաստէօն (շարք)	82
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ ՏՐԻԷՍՍԵՆ. — Ս. Բարսեղի հայ ձեռագիրներու հաւաքածոն (շարք) (Թրքմ. Հ. Բ. Վ. Չրաքեան)	65
ԲԻԻՐՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ. — Թաղէս Վ. Կոզանիացի, Թաթաթեցի եւ Թաղէս Երէյ Սերաստացի տաղասացներ	70
ՀՆԱԽՈՍԱԿԱՆ	
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՄԻՔԱՅԷԼ. — Հայաստանի բերդերը (շարք)	88
ԳՐԱԿԱՆ	
ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. — Վարդանանք	52
ՃԱՆԱՇՆԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Թագմական. Ա. — Մարտերդ	78
Բ. — Երգ խաղաղութեան	80
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	
ՃԱՆԱՇՆԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Բանաստեղծ Արամայիս Սրապեանի «Ազոլոյէն վեհե-տիկ»ը	92
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
Փ. Հ. Ե. — Մուրատ-Ռաֆայէլեան նախկին տաներու Միւթեան վերաբերեալ	87
ԱԿԱՆԱՏԵԱՍ. — Միլոնի Հայ տունը	96

SOMMAIRE

1954 Mars - Avril N. 3 - 4

ARTICLE DE FOND	PAGE
Djanachian P. M. - Voix d'Avril	49
HISTOIRE	
Hatsouni P. Vardan. - Histoire des nouveaux Lusignans (suite)	53
Fogolyan P. André. - La vie étonnante du Comte Abédik (trad. de l'hongrois) (suite)	58
Missakian Dr. B. - Louis Pasteur (1822-1895) L'homme (suite)	82
PHILOLOGIE	
Innoc. W. Driessen. O. P. - Les recueils des manuscrits arméniens de St. Basile (trad. en arm. par le Rév. P. Chérubin Tcherakian)	65
Kurdian Haroutioun. - Thaddée Vrt. de Colonia, de Thokath et le prêtre Thaddée de Sébaste les chansonniers	70
ARCHEOLOGIE	
Hovhannessian P. Michel. - Les forteresses de l'Arménie (suite)	88
LITTERATURE	
Serabian Aramaïs. - Les Vartananks	52
Djanachian P. M. - Martial I. Chant de guerre	78
II. Chant de paix	80
RECENSIONS	
Djanachian P. Mesrob. - Le recueil de poésies: «D'Asolo à Venise» du poète Aramaïs Serabian	92
ECHO ARMENIEN	
P. P. E. - Au sujet de l'Union des anciens élèves du Collège Moorat-Raphaël	87
Présent. - «La maison arménienne» de Milan	96

ԲԱՉՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1954
ՀԺԲ. ՏԱՐԻ

ՄԱՐՏ - ԱՊՐԵԼ
ԹԻՒ 3-4

ԱՊՐԻԼԵԱՆ ԶԱՅՆԵՐ

Գարնան՝ երբ բնութիւնը կը սկսի ծաղկիլ ու ժպտիլ, կը վերսկսի նաեւ կեանքը, իր բազմադիմի զանազանութեամբ ձեւերու եւ գոյներու: Կեանք մը համակ երգ, զուարթութիւն ու խայտառակ: Բայց կեանքի այս վերազարթումին մէջ ու մանաւանդ գարնանային զմայլելի զուարթութեան մէջ կարծես անկատարականօրէն կը ցցուի մեր ահաւոր եղեռնին անցեալ ուրուականը, մեր ապրիլեան հարիւր հազարաւոր գոհերու յիշատակը կու գայ հակադրեցութեամբ մը ցնցելու մեր հոգիները: Գարնան կենսամորոգ եղանակին՝ կեանքին խորտակուածները, արիւնի գետահոսումներով գալարուածներու պատկերները կ'արձանան մեր մտքերուն առջեւ ու անապատներու անվերջանալի կարաւանային գնացքներու ընդմէջէն կը տեսնենք ազգ մը գրեթէ ամբողջովին նետ-

ուած նահատակութեան անձայր ուղիներուն վրայ:

Այս ծանրաբախիժ յիշատակը, արդարեւ, ամէն գարնան կը նորոգուի մեր հոգիներէն ներս. որովհետեւ չափազանց քարմ է անոնց քողած հետքը, զոր քառասուն տարիները կարող չեն եղած մոռցնել գայն: Ո՛չ միայն քառասուն տարիներ, այլ նաեւ երկար դարեր պիտի ապրին անոնք, պիտի մոռցնեն իրենց երգերուն դիւցազնային շունչին ու կանչին մէջ, պիտի մըմնջեն աղանիներու պէս իրենց քրիստոնէական ներդաժնութեան ոգիով, եւ պիտի ներշնչեն մեզ անվերջ:

Յաւին յիշատակը, սակայն, պէտք չէ ներգործէ միայն լուսնի ու քաղցր ազդեցութիւն: Այդ յիշատակը կենսունակութեան ազդակ մը ըլլալու է. նահատակներու արիւնը մեր անման, մեր գործադ-